



Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK 16, N.Y.

MURRAY HILL 6-0710

ՍԻՈՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Առաջնորդ

Archbishop Sion Manougian, Primate

Թիւ 4082

Մարտ 12, 1962

Արժանաշնորհ

Տ. Առնակ ԲՀՆՅ. Գասպարեան

Հոգեւոր Հովիւ եւ Նախագահ Միսկան Խորհուրդի

Պրերկըն Քառնդիի Համայնքին.

Սիրելի Տէր Առնակ,

Ստացած ենք Ձեր Միսկան Խորհուրդի տեղեկագիրը, որով կը հաղորդեն թէ նախկին Հովիւ Արժ. Տ. Տաճատ ԲՀՆՅ. Դաւիթեանի նախագահութեամբ՝ 1962, Յունուար 21ին գումարուած Համայնքիդ Մը-խական Ժողովը կատարած է Միսկան Խորհուրդի մասնակի ընտրութիւն, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրեն ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ ձեր Միսկան Ժողովը տեղի ունեցած է թեմական Կանոնադրութեանց տրամադրութեանց համաձայն, եւ ընտրուած անձերը, իբրեւ եկեղեցւոյդ նախանձախնդիր ու նուիրեալ անդամներ, կը վայելեն ձեր համայնքի Ժողովուրդին վստահութիւնը, այսու կը վաւերացնենք անոնց ընտրութիւնը, ըստ հետեւեալին.

- Տիարք՝ Ռիչըրտ Թոնամեան
- Ստեփան Անանեան
- Ճէք Զարշափեան
- Ճէյմս Մելքոն
- Փիլիքը Անէմեան
- Ճան Թրուսեան

Օրհնելով Միսկան Խորհուրդիդ կազմը, կը մաղթենք ձեզի եւ պատուարժան անդամներուն յաջող ու արդիւնաւոր գործունէութիւն, ի պայծառութիւն Ա. Եկեղեցւոյդ եւ ի շինութիւն Համայնքիդ մեր սիրեցեալ Ժողովուրդին:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
Աղօթաբար

ՍԻՈՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի